

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱԲԵՐԷՆՈՎ ԿՐԿՆԱԴՐՈՇՄՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐԸ

ԵՂԻԱ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Քանի մը տարի առաջ, երբ լուսահոգի Ասպետ Տօնապետեանի հայկական դրամներու հաւաքածոն աճուրդով ծախու հանուեցաւ, այս յօդուածին հեղինակը կրցաւ ձեռք բերել Կիլիկեան Հայաստանի Կի կամ Գուխտոն (1342-1344) թագաւորին պատկանող արարբերէնով կրկնադրոշմուած¹ եզակի ու անտիպ արծաթ դրամ մը²: Օգտագործելով այս առիթը, յարմար նկատուեցաւ յօդուածի մը մէջ հայերէնով նկարագրել ծանօթ ու անտիպ բոլոր կրկնադրոշմուած դրամները:

Շփոթութիւն չստեղծելու համար, կ'ուզենք պարզել թէ հոս կրկնադրոշմուած (overstruck) կոչելով պիտի քննուին Կիլիկեան Հայաստանի արարբերէնով թէ՛ կրկնադրոշմուած եւ թէ՛ կրկնանշուած (countermarked) բոլոր դրամները: Սոյն յօդուածի ուսումնասիրութեան ծիրին մաս չեն կազմեր հայերէնով կրկնանշուած հայկական դրամները³, ինչպէս նաեւ հայերէնով կրկնադրոշմուած սելջուկեան դիրհէմները⁴:

Հայկական դրամները ուսումնասիրող բանասէրներ ծանօթ էին Կիլիկեան Հայաստանի կրկնադրոշմուած դրամներու, սակայն անոնք սկիզբները բաւական դժուարութիւն կ'ունենային ճշգրտութեամբ տարբերելու ներքնադրոշմ ու կրկնադրոշմը:

1846ին առաջին անգամ Ժ. Լելիուէլ հրատարակեց կրկնադրոշմուած հայկական դրամի մը գծագրութիւնը: Լելիուէլ սխալմամբ զայն որակած է իսլամական դրամ մը՝ կրկնադրոշմուած հայերէն տառերով: Սակայն հայերէն ընթերցողի մը օգնութեամբ, վստահօրէն զայն վերագրած է Լեւոն անունով թագաւորի մը⁵: Արարբերէն տառերուն վերագրութիւնը մնացած է անորոշ:

1855ին Վիկտոր Լանգլուա հրատարակեց իր հռչակաւոր գիրքը, նուիրուած՝ միջնադարեան հայկական դրամներուն⁶: Հոս Լանգլուան արտատպած է Լելիուէլի գծագրութիւնը, սակայն դրամը դասուորած է Կիլիկեան Հայաստանի Լեւոն Դ. (1320-1342) թագաւորի անուան ներքեւ: Դժբախտաբար, Լանգլուա կրկնած է Լելիուէլի եզրակացութիւնը թէ՛ իսլամական դրամ մըն է, կրկնադրոշմուած՝ հայերէն տառերով: Լանգլուան արարատառ դրոշմը վերագրած է Գոնիայի սել-

ջուկ սուլթան Կիլիչ Արսլանին (1188-1210): Նոյն գրքին մէջ, ան նաեւ նկարագրած ու տպած է Հեթում-Քայխոսրովի կրկնանշուած երկլեզւեան դրամի գրչանկարը⁷:

1883ին Օ. Կողրինգթոն հրատարակեց վեց կտոր հայկական կրրկնադրոշմուած արծաթեայ դրամներ⁸: Ապա, 1904ին իսլամական դրամներու վերաբերեալ իր գիրքին մէջ, ան կրկնադրոշմը ուղիղ կերպով վերագրած է Եգիպտոսի սուլթան ալ-Նասիր Մուհամմէդին (1293-1341, ընդհատումներով)⁹:

Հայր Կղեմէս Սիպիլեան¹⁰ (1892) եւ Կարապետ Յ. Բասմաջեան¹¹ (1936) ծանօթ էին կրկնադրոշմուած դրամներուն: Նոյնիսկ գիտէին ու մանց Լեւոն Դ. Թազաւորին պատկանիլը: Սակայն այդպիսի անլի ու չինչ ուսումնասիրութիւն չէին կատարած այդ ուղղութեամբ:

1936ին Մ. Երէցեան հրատարակեց կրկնադրոշմուած դրամ մը եւ առանց տարակուսանքի գայն վերագրեց Լեւոն Դ. Թազաւորին¹²: Երէցեան թէեւ կրցած է կարդալ արաբատառ դրոշմը, սակայն որով պատկանիլն ու դրդապատճառները իր քննարկութեան ծիրէն դուրս մնացած են:

1962ին Զարեհ Պտուկեան հրատարակեց իր եզակի ու վիթխարի ուսումնասիրութիւնը՝ Կիլիկեան Հայաստանի դրամները¹³: Պտուկեան ոչ միայն տուած է պատմական ուրուագիծ մը, այլ նաեւ բացատրած այս դրամներուն գոյութեան դրդապատճառները: Իր գրքի կորպուսին պատրաստութեան համար, Պտուկեան քննած է արաբերէնով կրկնադրոշմուած 128 հատ դրամ: Ասոնցմէ 13 հատը վերագրուած են Օշին թագաւորին (1308-1320), 50 հատը՝ Լեւոն Դ. Թազաւորին, իսկ 63 հատը մնացած են անընթեռնելի: Պտուկեան իր տախտակներուն մէջ ընծայած է երկու տեսակ՝ չորս կրկնադրոշմուած դրամներու լուսանկարները: Կէսը տրուած են Օշինին, միւս կէսը՝ Լեւոն Դ.ին: Իսկ արաբատառ դրոշմները վերագրած է Եգիպտոսի մամլուք սուլթան ալ-Նասիր Մուհամմէդին:

1964ին Փոլ Բալոգ հրատարակեց իր գիրքը՝ Եգիպտոսի եւ Մուրիոյ մամլուք սուլթաններու դրամները¹⁴: Այս կոթողային ուսումնասիրութեան մէջ Բալոգ մանրամասնութեամբ քննարկած է կրկնադրոշմուած դրամները: Արաբատառ դրամներու դրոշմին լրիւ խորագրութիւնը վերակազմուած է՝ ուսումնասիրելով բազմաթիւ կրկնադրոշմուած դրամներու նմուշներ: Յուցակագրութեան մէջ ընծայուած են տասը դրամ, որոնց վեց հատին նկարները պատկերուած են տախտակներուն մէջ: Երեք հատը կրկնադրոշմուած արծաթեայ դրամներ են, վերագրուած՝ Օշին թագաւորին, երեք հատը՝ Լեւոն Դ. Թազաւորին, իսկ չորս հատը՝ անորոշ: Բալոգ վերակազմուած արաբերէն խորագրութեան տիպերը վերագրած է ալ-Նասիր Մուհամմէդին: Դրամ-

ներու կաղապարները նախապէս գործածուած են հատանելու համար ոսկեայ դինարներ (1312 եւ 1314)՝ Գահիրէի մէջ, ինչպէս նաեւ արծաթեայ դիրհէմներ՝ Դամասկոսի մէջ: Կրկնադրոշմի խորագրութիւնները չեն յիշատակեր դրամահատարան եւ թուագրութիւն:

1964ին Լ. Բահմանի տեղեկագրեց դրամագիւտ մը, յայտնաբերուած՝ Հին Տիրերիաս քաղաքի աւերակներուն մէջ¹⁵: Դրամագիւտին փրկուած մասը պարունակած է 116 կտոր դրամ: Բահմանիի դրամներուն 90 հատը տրուած են մամլուքներուն, 23 հատը՝ վենետիկցիներուն, եւ 3 հատը՝ հայերուն: Երեք դրամներէն մին՝ հայատառ արծաթեայ թագուորին մը, վերագրուած է Լեւոն Դ. թագաւորին: Թէեւ հեղինակը չէ վերագրած, սակայն միւս երկու դրամները՝ արաբերէնով կրկնադրոշմուած, նոյնպէս կը պատկանին Լեւոն Դ.ին:

1969ին Պտուկեան հրատարակեց արաբերէնով կրկնադրոշմուած հայկական դրամներու նուիրուած իր երկարաշունչ ուսումնասիրութիւնը¹⁶: Հոս քննուած են անցեալին հրատարակուած աշխատանքներուն կարեւորագոյնները, ուրուագծուած է պատմական անցեալ մը, մամլուքներուն մեծաքանակ հարկ ստանալը, եւ արծաթի պաշարի սակաւութեան պատճառով Կիլիկիան հայաստանի դրամներու շուտով արաբերէնով կրկնադրոշմուելը: Պտուկեան քննարկած է նաեւ վեց հայ թագաւորներուն տրուած ինն կտոր դրամ, բոլորն ալ արաբերէնով կրկնադրոշմուած: Յուցակին դասաւորումին պարունակութիւնն է. Հեթում Բ.ի (1289-1305) 1 պղինձ, Լեւոն Գ.ի (1301-1307) 1 արծաթ, Օշինի 2 արծաթ, Լեւոն Դ.ի 2 արծաթ, Կոստանդին Գ.ի (1344-1363) 2 արծաթ եւ Լեւոն Բռնակալի (1365-1373) 1 արծաթ: Վերակազմուած արաբատառ խորագրութիւնները վերագրուած են ալ-Նասիր Մուհամմէդին եւ ալ-Աշրաֆ Նասիր ալ-Դին Շաբան Բ.ին (1363-1376): Յօդուածին մէջ նաեւ նկարագրուած է վերջերս յայտնաբերուած 21 կտոր դրամ հաշուող խառն դրամագիւտի մը պարունակութիւնը՝ 9 հատ հայատառ թագուորին, 7 հատ արաբերէնով կրկնադրոշմուած հայկական թագուորին, 1 հատ Տրապիզոնի դրամ եւ 4 հատ մամլուք սուլթաններու արծաթեայ դիրհէմներ:

1970ին Ա. Բ. Ֆահմի հրատարակեց մամլուք դրամներուն նուիրուած իր յօդուածը, ուր յիշատակուած են նաեւ հինգ հայկական արծաթեայ դրամներ, կրկնադրոշմուած՝ արաբերէն տառերով¹⁷: Ֆահմի իւրաքանչիւր դրամի համար պատրաստած է արաբատառ խորագրութիւնը եւ ընծայած դրամի կաղապարին գրչանկարը:

1970ին Հայր Օգոստինոս Սեքուլեան իր Հեթում Բ.ի պղինձներուն ցուցակագրութեան ընթացքին, քննարկած է Հեթումի արաբերէնով կրկնադրոշմ դրամները, տրուած՝ Մելիք ալ-Աշրաֆ Սալահ ալ-Դին Խալիլին (1290-1293)¹⁸: Ապա 1972ին, Սեքուլեան Օշին թագաւորին ար-

ընտանիքներն ու ժառանգորդները հիմնեցին լատին իշխանութիւններ՝ Միջերկրականի արեւելեան ափին վրայ:

Այս դէպքերէն հարիւր տարի ետք, Ռուբինեան հարստութեան պարոնութիւնը փոխուեցաւ թագաւորութեան, երբ իշխան Լեւոն Բ. (գահակալած է 1187էն) թագաւոր օծուեցաւ 6 Յունուար 1198ին²⁴: Կիլիկիան Հայաստանը հարաւէն սահմանակից էր խաչակիր իշխանութեանց, որոնք բնական պատուար մըն էին իսլամ թշնամիներուն դէմ: Կիլիկիան, ընդհանուր առմամբ, միայն պէտք էր մտահոգուէր հիւսիսի սեջրուկեան թիւրքերուն դէմ: Այս քաղաքական կացութիւնը օգնեց Կիլիկիան Հայաստանին՝ կերտելու համար բարգաւաճ եւ հզօր թագաւորութիւն մը:

Լեւոն Ա. թագաւորին (1198-1219) պատկանող կրկնառիւծ արծաթեայ դրամներէն երկու հատ կրկնադրոշմուած են սելջուկեան Քայխոսրով Գ-ի անունով: Յարդ նման այլ օրինակ մը չէ տեղեկագրուած: Դրամները կոխուած են Լուլուա հանքը, որ Կիլիկիան Հայաստանի մաս կը կազմէր մինչեւ 1219: Այս պարագային, դրամը կրկնադրոշմուած է իր արծաթի պարունակութեան համար, երբ ապրանքափոխանակութեան պատճառով դրամը ճամբորդած է հարեւան երկիր եւ կամ հոն մնացած է Լեւոն Ա-ի տիրակալութեան շրջանէն՝ 1219էն առաջ:

Հեթում Ա. (1226-1270) կանխատեսութիւնն ունեցաւ գիտակցելու թէ միայն մոնղոլներու հետ դաշնակցութիւն մը կրնայ փրկել իր թագաւորութիւնը: Անգամ մը որ մոնղոլ բանակը տկարանալու սկսաւ, Կիլիկիոյ հարաւային դարպասին թումը կանգնած քրիստոնեայ իշխանութիւնները սկսան տապալիլ՝ Եգիպտոսի մամլուքներու արշաւանքներուն առջեւ: ԺԳ- դարու վերջաւորութեան, Կիպրոսն էր միակ միւս քրիստոնեայ թագաւորութիւնը, որ տակաւին իր գոյութիւնը կը պահէր Մերձաւոր Արեւելքի մէջ: Մամլուքներուն արշաւանքները տկարացուցին Կիլիկիան եւ հայերը հարկադրուեցան Եգիպտոսի սուլթաններուն պատերազմական տուգանք կամ հարկ վճարել:

Հեթում Ա-էն մեզի հասած է երկլիզուկեան դրամ մը (Հեթում-Քայխոսրով), որուն հայերէն կողմը՝ ձիու քամակին վրայ արաբերէն տառերով կրկնանշուած է Ալլահ: Հարիւր յիսուն տարիէ ի վեր նոյն կնիքով դրոշմուած այլ օրինակ մը չէ յայտնաբերուած:

Լեւոն Բ. առաջինն էր որ պատերազմի դաշտին վրայ պարտուելու պատճառով մամլուքներուն հետ խաղաղութեան նուաստացուցիչ դաշինք մը կնքեց: Այս դաշինքը պիտի գոյատեւէր «տաս տարի, տաս ամիս, տաս օր, եւ տաս ժամ»՝ սկսելով 7 Մայիս 1285էն: Նաեւ՝ ան պիտի վճարէր տարեկան մէկ միլիոն դիրհէմ: Կէսը՝ արծաթեայ դրամով, միւս կէսը՝ ապրանքով՝ ձի, ջորի, տաս հազար երկաթէ ձող²⁵: Յարդ Լեւոն Բ-էն կրկնադրոշմուած արծաթեայ կամ պղնձեայ դրամ չէ

ծաթեայ դրամներուն վերաբերեալ իր յօդուածին մէջ հրատարակեց չորս կրկնադրոշմ դրամ¹⁹: Հոս Սեբուլեան եզրակացուցած է թէ արարատառ կնիքը կը զարնուէր գրաւողին կողմէ՝ սահմանափակ դրամներու վրայ, որոնք կը փոխանակուէին աւելի մեծ գումարի մը չկրնաքուած դրամներու յանձնումի պարագային: Արարատառ կնիքը վերագրուած է ալ-Նասիր Մուհամմէդին:

1976ին Ն. Ռհոդս հրատարակեց *Լեւոն Ա.* (1198-1219) թագաւորին պատկանող նոր յայտնաբերուած երկու արծաթեայ դրամներ, կրկնադրոշմուած՝ ոչ թէ Եգիպտոսի մամլուքներուն կողմէ, այլ դրացի սելջուկեան Քայխոսրով Գ.ի (1265-1282) կողմէ²⁰:

1995ին լոյս տեսաւ մեր գիրքը, նուիրուած՝ հայկական դրամներու եւ իրենց շուկայի արժէքներուն²¹: Գիրքին մէջ դասաւորութիւնը ընծայած է հայ թագաւորներու արաբերէնով կրկնադրոշմուած ինն տեսակ դրամներ: Հեթում Բ.ի 1 պղինձ, Լեւոն Գ.ի 1 արծաթ, Օշինի 1 արծաթ, Լեւոն Դ.ի 4 տեսակ արծաթ, Կոստանդին Գ.ի 1 արծաթ եւ Լեւոն Բռնակալի 1 արծաթ: Կրկնադրոշմուած արաբերէն խորագրութիւնները վերագրուած են ալ-Աշրաֆ Սալահ ալ-Դին Սալիլի, ալ-Նասիր Մուհամմէդի, ալ-Աշրաֆ Նասիր ալ-Դին Շարան Բ.ի եւ անորոշ մամլուք սուլթանի մը:

1998ին հրատարակեցինք հակիրճ տեղեկագրութիւն մը Կի թագաւորի արաբերէնով կրկնանշուած նորայայտ արծաթեայ դրամին մասին²²: Դրոշմը զարնուած է դրամի միայն ետեւի կողմի հայերէն չըջագրութեան վրայ: Արարատառ ընթերցանութիւնն է ալ-Մալիք Ըստ երեւոյթին, կնիքը զարնուած է անորոշ մամլուք սուլթանի մը կողմէ:

Վերոյիշեալ ուսումնասիրութիւններէն անկախ, վաճառքի եւ աճուրդի համար երբեմն ցուցակագրուած են Կիլիկեան Հայաստանի կրկնադրոշմուած դրամները²³, թէեւ այսպիսի դրամներ աւելի հազազիւտ են քան հայ թագաւորներու սովորական հայատառ դրամները:

ԱՐԱԲԱՏԱՌ ԿՐԿՆԱԴՐՈՇՄՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐ

Կիլիկեան Հայաստանի դրամներուն արաբերէնով կրկնադրոշմուելուն հիմնական պատճառը հայերու ռազմական տկարութիւնն էր՝ Լեւոն Բ.ի (1270-1289) թագաւորութեան շրջանէն սկսեալ:

Ռուբինեան հարստութիւնը հիմնուեցաւ Բագրատունեաց հարստութեան անկումէն (1045) ետք, երբ հայեր՝ հարիւր-հազարներով արտագաղթեցին իրենց մայր հայրենիքէն ու բնակութիւն հաստատեցին Բիզանդական կայսրութեան հարաւային մասին վրայ: Ռուբինեան հարստութեան հիմնադրութենէն (1080) քիչ ետք՝ 1097ին, առաջին խաչակիրները անցան Փոքր Ասիայէն ու Կիլիկիայէն եւ անոնցմէ ոմանց

յայտնաբերուած: Թերեւս մամուլքները հալեցուցին հայատառ այդ դրամները եւ հատանեցին իրենց դիրհէմները:

Հեթում Բ. երբեք թագաւոր չօժուեցաւ: Այս պատճառով հատանեց երկու տեսակ պղնձեայ դրամ, ճանչցուած՝ քարտէզ անունով, ինչպէս նաեւ փոքր արծաթապղինձ մը, նման՝ խաչակիրներու դրամներուն: Վերջինս շատ թեթեւ (շուրջ 15 մմ. եւ 0.55 գրամ) եւ դիւրաբեկ կտոր մըն է. դժուար թէ կարողանայ դիմանալ կրկնադրոշմութիւն գործողութեան: Պտուկեան հրատարակած է Հեթում Բ-ի կրկնադրոշմուած քարտէզէն օրինակ մը²⁶: Բայց կրկնադրոշմին անընթեռնելի ըլլալուն պատճառով վերագրումը անորոշ մնացած է, հակառակ որ Պտուկեան համբաւաւոր Ջորջ Մայլզի²⁷ նման իսլամական դրամներու մասնագէտի մը աջակցութիւնը ունէր, ինչպէս յիշած է ան իր Երախտիքի բաժնին մէջ²⁸: Կիլիկեան Հայաստանի արաբերէնով կրկնադրոշմուած դրամներէն միակ պղնձեայ դրամները կը պատկանին Հեթում Բ-ին:

Սեբուլեան կարողացած է կարդալ արաբատառ կրկնադրոշմը Վիեննայի Միսթարեան հաւաքածոյին Հեթում Բ-ի պղնձեայ դրամներուն վրայէն եւ քիչ մը տարակուսանքով գայն վերագրած է ալ-Աշ-րաֆ Սալահ ալ-Դին Ռայիլիին: Հոս ալ սակայն կան հարցեր, որոնք լրիւ չեն լուծուած: Օրինակի համար, Սեբուլեան համեստութեամբ կը գրէր «կը կարծենք կարդալ» ալ-Աշրաֆ Մեյլթը (կամ ալ-Մեյլթը)²⁹: Բալդզի³⁰ գրքին դասաւորութեան մէջ, մամուլքներու դրամներուն պատկանող խորագրութիւնները միշտ կը տրուին ալ-Մեյլթը ալ-Աշրաֆ ձեւով: Սեբուլեանի հրատարակած դրամին (թիւ 4) նկարին որակը մեզի չ'արտօնէր կարդալ արաբատառ դրոշմը: Հիմնուած Սեբուլեանի եզրակացութեան վրայ, Բալդզի ցուցակագրութենէն³¹ ընտրեցինք յարմարագոյն դրամի խորագրութիւնը (Աղիւսակ 1, Տիպ II), որ կրնար գոհացնել թիւ 4 դրամի արաբատառ դրոշմին պահանջը:

Մեր հաւաքածոյին մէջ Հեթում Բ-ի կրկնադրոշմուած քարտէզին (պղնձեայ դրամ) վրայ իսլամ գահակալին անունը չէ արձանագրուած: Բայց դրոշմուած արաբերէն տառերը շատ յստակ են եւ լաւ կրնան կարդացուիլ՝ [ալ-սուլթան ալ -/[ալ-տուլթիա ուալ-տին (Աղիւսակ 2, Սոր. 5բ): Այս արձանագրութիւնը բաղդատուեցաւ Բալդզի գրքի տախտակներուն վրայի դրամներուն նկարներուն հետ³²: Մեր խնդրոյ առարկայ դրամին արաբերէն տառերուն գրելաձեւը չի համապատասխանէր ալ-Աշրաֆ Սալահ ալ-Դին Ռայիլի դրամներու տառերուն ոճին: Նոյն բաղդատութիւնը կատարուեցաւ Սթիւըրթ Փուլի գիրքի տախտակներուն վրայի սելջուկեան դրամներու տառերու ոճին հետ³³: Մեր Սոր. 5բ-ի արաբերէն տառերուն ոճը շատ նման է Փուլի տախտակ VI, թիւ 298 դրամի տառերուն ոճին: Սոր. 5բ-ի բառերը կը

**Աղյուսակ 1. Վերակազմուած արաբատառ կրկնադրոշմի լրիւ
խորագրութիւնները**

Տիպ	Տիրակալ	Տիպի երես	Տիպի կոճակ
I	Քաշխտսրով Գ.	السلطان الاعظم غيث الدين والدين ابوالفتح كيجسرو بن قاج ارسلان	المملك لله * * ضرب بمعدن لولوفى سنة اربع مائة و ستمائة
	Թարգմն.	Գերագոյն սուլթան աշխարհի ու հաւատքի օգնութեան հասնող Գայր Նուաճումի, Քաշխտսրով որդի Քիլիչ Արսլանի	Գերագոյն իշխանութիւնը կը պատկանի Աստուծոյ Չարնուած Լույսա Չանքին մէջ. տարին՝ չորս եւ վաթսուն եւ վեց հարիւր
II	ալ-Աշրաֆ Սալահ ալ- Դին հալիլ	قلاون السلطان الملك الاشرف صلاح الدين ناصر الملة الحمدية على الدولة العباسية خليل بن	لا اله الا الله محمد رسول الله ارسله بالحدى ودين الحق
	Թարգմն.	հալաւուն Ազնուագոյն սուլթան եւ քազաւոր Գաւաթըզ գտող եւ Յաղթանակը բերող Մահմեդական համայնքին Կենսարար Արքայան կառավարութեան հալիլ որդի	Չկայ աստուած քացի Աստուծէ, Մուհամմէդ առաքեալն է Աստուծոյ, որ ուղարկած է զինք առաջնորդութեամբ եւ ճշմարիտ հաւատքով
III	ալ-Նասիր Մուհամմէդ	الله وما النصر الا من عند السلطان الملك الناصر ناصر الدنيا والدين محمد بن الملك المنصور قلاون	الله وما النصر الا من عند لا اله الا الله محمد رسول الله ارسله بالهدى ودين الحق
	Թարգմն.	Աստուած եւ չկայ Յաղթանակ քացի (Աստուծմով) Յաղթանակ-Բերող Սուլթան եւ Քազաւոր Աշխարհի ու հաւատքի Յաղթանակ-Բերողը Մուհամմէդ որդին Յաղթանակ-Շնորհուած քազաւորին հալաւուն	Աստուած եւ չկայ Յաղթանակ քացի (Աստուծմով). Չկայ Աստուած քացի Աստուծէ. Մուհամմէդ առաքեալն է Աստուծոյ, որ ուղարկած է զինք առաջնորդութեամբ եւ ճշմարիտ հաւատքով
IV	ալ-Աշրաֆ Նասիր ալ- Դին Շարան Բ.	السلطان الملك الاشرف ناصر الدنيا والدين شيبان بن الملك ال ...	لا اله الا الله محمد رسول الله ارسله بالهدى
	Թարգմն.	Սուլթանն ու քազաւորը, Ազնուագոյնը, Յաղթանակ Բերող Աշխարհին ու հաւատքին, Շարան՝ որդի Յաղթանակ-Բերող Գասան Քազաւորին	Չկայ Աստուած քացի Աստուծէ, Մուհամմէդ առաքեալն է Աստուծոյ, որ ուղարկած է զինք առաջնորդութեամբ [եւ ճշմարիտ հաւատքով]

յարմարին նոյն սուլթանին՝ սելջուկեան Մասուդ Բ-ի (1282-1305, ընդ-
միջուած չորս տարրեր գահակալութեամբ) խորագրութեան մէկ մա-
սին: Այս ուղղութեամբ վերջնական վճիռ արձակելու համար, Հեթում
Բ-ի բազմաթիւ կրկնադրոշմուած քարտէզներ պէտք է համախմ-
բուին, ուսումնասիրուին, ապա վերակազմուի լրիւ արաբատառ
կրկնադրոշմի խորագրութիւնը:

Լեւոն Գ-ի արաբերէնով կրկնադրոշմուած դրամները (թիւ 6 եւ 7)
չափազանց հազուագիւտ են: Որեւէ պատմական աղբիւր տեղեկագ-
րութիւն չունի թէ Լեւոն Գ-ի գահակալութեան շրջանին հայերը տուրք
վճարեցին մամլուքներուն: Միւս բոլոր դրամներուն նման, այս երկու
արծաթ կտորներն ալ դրոշմուած են արաբատառ խորագրութեան
մէկ մասով: սակայն տառերուն գրելաձեւը, սուլթանին տիտղոսը, ա-
նունը, տոհմաբանութիւնը, կնիքներուն կազմաւորումը միմիայն
կ'արտօնեն առանց տարակուսանքի գանոնք վերագրել ալ-Նասիր
Մուհամմէդ մամլուք սուլթանին:

Օշինի կրկնադրոշմուած դրամներէն գոյութիւն ունին բազմաթիւ
օրինակներ: Օշինի կենդանութեան, մամլուքները քանիցս փորձեցին
ընկճել Կիլիկիան: Սկիզբները անոնք յաջողութիւններ արձանագրեցին
ու գրաւեցին հարաւային Կիլիկիան, սակայն հայ ժողովուրդը կրցաւ
միանալ եւ հայրենի հողէն դուրս չպրտել թշնամին, որ ետին ձգեց
6000 դիակ: Երբ յաղթական բանակը վերադարձաւ Միս, արդէն Օշին
մահացած էր 20 Յուլիս 1320ին:

Լեւոն Դ-ի գահակալութեան շրջանը ցաւալի էջ մըն է հայոց պատ-
մութեան մէջ: Մամլուքները անընդհատ շարունակեցին յարձակել Կի-
լիկեան Հայաստանի վրայ եւ նոյնիսկ գրաւեցին ու կործանեցին Այաս
նաւահանգիստը: 1323ին, հայերը հարկադրուած՝ խաղաղութեան դա-
շինք կնքեցին տասնհինգ տարուայ համար: Խաղաղութեան պայման-
ներէն մէկը այն էր, թէ Լեւոն պէտք էր վճարէր ալ-Նասիր Մուհամմէ-
դին տարեկան 1.200.000 թագուորին (արժէքագրուած արծաթ
դրամ), ինչպէս նաեւ Այաս նաւահանգիստի ու աղի հանքերուն եկա-
մուտներուն կէսը³⁴: Հակառակ որ արծաթ մետաղի սակաւութիւն գո-
յութիւն ունէր իսլամ երկիրներու մէջ, հայերը շարունակեցին անընդ-
հատ հատանել արծաթեայ դրամ, դժբախտաբար՝ պատերազմական
սուղանքներու պատճառով արժէքագրուած արծաթեայ դրամ:

Տրամաբանական է եզրակացնել թէ Լեւոն Դ- յարգեց իր դաշինքը
եւ վճարեց իր տուրքը: Օշին մահացած էր տակաւին քանի մը տարի ա-
ռաջ: Անկասկած Օշինի արծաթեայ թագուորիններէն բաւական միա-
ւորներ տակաւին շրջանառութեան մէջ էին: Իբրեւ հարկ տրուեցաւ
ինչ որ կը գտնուէր գանձատան մէջ՝ Լեւոն Դ-ի թագուորիններուն
հետ միատեղ, թէ՛ Օշինի եւ թէ՛ Լեւոն Գ-ի՝ ետին մնացած միջանի օրի-

նակ արծաթեայ դրամները: Լեւոն Դ-ի եւ Օշինի կրկնադրոշմուած դրամներու բազմաթիւ օրինակներու ուսումնասիրութեամբ Բալոգ վերակազմեց կրկնադրոշմի արարատառ խորագրութիւնը եւ գայն կատարեալ ճշգրտութեամբ վերագրեց ալ-Նասիր Մուհամմէդին³⁵:

Լեւոն Դ-էն մեզի հասած է նաեւ վեցթեւեան աստղով կրկնանշուած թագուորին մը: Վեցթեւեան աստղի նշան մը գոյութիւն ունի մամլուք ապակիէ կշռաքարի մը վրայ, գոր Մալքըլ Միշնըր վերագրած է անորոշ մամլուք սուլթանի մը³⁶: Իսկ դրամներու պարագային՝ հրատարակուած ծանօթ դրամներու տարբերակները, որոնց աստղին մէջ կան յաւելեալ զարդեր կամ գրութիւններ, Բալոգի կողմէ տրուած են ալ-Նասիր Մուհամմէդ եւ ալ-Աշրաֆ Նասիր ալ-Դին Շարան Բ. մամլուք սուլթաններուն³⁷: Ապահով կերպով կրնանք եզրակացնել, թէ վեցթեւեան աստղով կրկնանշանին անորոշ մամլուք սուլթանը ապրած է նոյն ժամանակաշրջանին մէջ:

Մեր հաւաքածոյին մաս կը կազմէ Լեւոն Դ-ի երկու անգամ կրկնադրոշմուած եզակի թագուորին մը: Երկրորդ կրկնադրոշմը շրջանակաձեւ դրոշմ մըն է եւ արարատառ արձանագրութիւնն է ալ-Մելիք ալ-Աշրաֆ: Իսկ առաջին կրկնադրոշմը կը պատկանի ալ-Նասիր Մուհամմէդին:

Կի թագաւորը գինուորական մըն էր եւ մերժեց մամլուք սուլթանին հարկ տալ: Իր օրով, նոյնիսկ ետ մղուեցան եգիպտական քանի մը յարձակումներ: Դժբախտաբար, Կի սպաննուեցաւ ներքին պառակտումներու պատճառով: Կի թագաւորին ալ-Մելիք կրկնանշուած դրամը կը պատկանի խնդրոյ առարկայ ժամանակաշրջանի մամլուք սուլթանի մը: Նման դրոշմերու տարբերակներ գոյութիւն ունին Բալոգի գիրքին մէջ եւ մեծամասնութիւնը տրուած է ալ-Աշրաֆ Նասիր ալ-Դին Շարան Բ. սուլթանին:

Կոստանդին Գ-ի իշխանութեան շրջանին մամլուքները շարունակեցին արշաւել Կիլիկիա: 1360ին ալ-Նասիր ալ-Հասան (1347-1351, 1354-1361) մամլուք սուլթանը գրաւեց Կիլիկիոյ հարաւային մասը, ինչպէս նաեւ Տարսոնի դրամահատարանը, ուր իսլամական դրամ հատանեց՝ Տարսոն արձանագրութեամբ եւ ալ-Հասանի անունով³⁸: Եթէ մամլուքները կրկնադրոշմեցին հայկական դրամ ալ-Հասանի անունով, ցարդ նման դրամ մը չէ յայտնաբերուած: Որեւէ դաշնագիր ալ գոյութիւն չունի տեղեկագրելու թէ Կոստանդին Գ. հարկ տուաւ ալ-Հասանին: Սակայն դրամագիտական տուեալներ ցոյց կու տան թէ Կոստանդին Գ-ի (թիւ 15 եւ 16) եւ Լեւոն Բոնակայի (թիւ 18 եւ 19) դրամները կրկնադրոշմուած են ալ-Աշրաֆ Նասիր ալ-Դին Շարան Բ-ի անունով: Երբ նկատի առնենք թէ երկու իրարու յաջորդող հայ թագաւորներու դրամները կրկնադրոշմուած են նոյն մամլուք սուլթանի մը դրամ-

ներու կաղապարներուն տեսակով, ցաւօք ակամայ կ'եզրակացուի թէ հայերը շարունակեցին հարկ տալ նոյնիսկ մինչեւ Լեւոն Բոնակալի օրերը, կամ ալ՝ ամէն ինչ յետագային կողոպտուած է բռնագրաւող բանակին կողմէ: Պտուկեանի թելադրած կրկնադրոշմ խորագրութիւնը (Աղիւսակ 1, Տիպ IV) հիմ կը ծառայէ Կոստանդին Գ-ի եւ մասնաւորաբար Լեւոն Բոնակալի արաբատառ կրկնադրոշմներուն: Մեր կողմէ ընթերցուած արաբատառ խորագրութիւնը (Աղիւսակ 2, Ոոր-18ր) Տիպ IV-ի տարբերակ մըն է: Այս երկու տիրակալներուն համար մեծաքանակ օրինակներ պէտք է համախմբուին, ուսումնասիրուին, ապա վերջնական ու լրիւ արաբատառ կրկնադրոշմ խորագրութիւնը վերակազմուի:

Կոստանդին Գ-էն ալ մեզի հասած է վեցթեւեան աստղով կրկնանշուած թագուորին մը՝ նման Լեւոն Գ-ի արծաթին վրայ զարնուած նշանին³⁸:

Կոստանդին Գ- (1365-1373) եւ Լեւոն Ե- (1374-1375) թագաւորներէն արաբերէնով կրկնադրոշմուած դրամ չէ յայտնաբերուած: Միջանկեալ, յիշենք, որ Լեւոն Ե- հատանեց փոքր արծաթապղինձ մը՝ նման խաչակիրներու դրամներուն, որ դժուար թէ դիմանար կրկնադրոշմուելու:

Մեծաքանակ արծաթեայ դրամներուն մուտքը մամլուք դանձատուն, թեթեւցուց Եգիպտոսի մէջի արծաթի ճզնաժամը: Հաւանաբար այդ դրամներուն մեծամասնութիւնը հալեցուցին, ձոյլ մետաղի վերածեցին՝ մամլուք դիրճէմներ հատանելու համար: Նաեւ բազմաթիւ թագուորիններ կրկնադրոշմուեցան ալ-Նասիր Մուհամմէդի անունով: Յայտնաբերուած դրամագիւտեր ցոյց կու տան թէ հայատառ արծաթեայ թագուորիններ, մամլուք արծաթեայ դիրճէմներ, արաբերէնով կրկնադրոշմուած հայկական թագուորիններու հետ միատեղ շրջանառութիւն ունեցած են Մերձաւոր Արեւելքի մէջ, քանի որ երբքը միատեղ գտնուած են դրամագիւտերուն մէջ⁴⁰: Ըստ երեւոյթին, կրկնադրոշմը կատարուած է հապճեպով եւ առանց բաւարար տաքցնելու հին դրամը կամ մետաղը: Դրամներէն ոմանց վրայի դրոշմը այնքան վատ է, որ ներքեւի պահպանուած հայերէն տառերը կրնան ընթերցուիլ եւ դրամը վերագրուիլ իր համապատասխան հայ տիրակալին: Հայագիտական ուսումնասիրութեան համար այսպիսի դրամներ կը ներկայացնեն աշխատանքի դաշտ մը:

Պտուկեան եւ Բալոգ կ'եզրակացնեն, թէ հայկական արծաթեայ դրամները կրկնադրոշմուած են կրկին շրջանառութեան համար⁴¹: Սեբուլեան կ'եզրակացնէ թէ արաբատառ դրամներու կրկնադրոշմուածները սահմանափակօրէն կը փոխանակուէին աւելի մեծ գումարի մը չկնքուած դրամներով⁴²: Երկու տեսակէտերն ալ ունին իրենց

ընդունելի կողմերը: Երբ տարեկան մէկ միլիոնէ աւելի արծաթեայ դրամներու հասոյթ մը կայ՝ իբրեւ հարկերէ եկամուտ, եւ արծաթ մետաղի ճգնաժամ գոյութիւն ունի, շատ հաւանաբար պիտի ջանային այդ դրամներուն որոշ մասը արագօրէն կրկնադրոշմել իրենց կարելիութեան սահմաններուն մէջ՝ ժամանակակից տիրակալի դրամներու կաղապարներով՝ գոհացնելու համար ներքին ու արտաքին վաճառականական կարիքները: Միւս կողմէ, ենթադրելով որ գրաւող բանակը ժողովուրդը չէ ջարդած, ամէն ինչ չէ կողոպտած ու գերեվարած, եւ նստած է տակաւին հայ ժողովուրդով բնակեցուած հայկական հողին վրայ, եւ օտար բանակը կ'ուզէ իր հեղինակութիւնը հաստատել, վստահօրէն պիտի կրկնադրոշմէին հայկական արծաթեայ դրամներ՝ իրենց քով ունեցած դրամներու կաղապարներով եւ կարելիութեան սահմաններուն մէջ պիտի ջանային օգտագործել տեղական դրամահատարանները: Նման գործողութեան մը պարագային, չենք կարծեր թէ Եգիպտոս գտնուած դրամագիւտեր պարունակէին մեծաքանակ կրկնադրոշմուած թագուորիններ: Եթէ անհրաժեշտ էր որ դրամահատութիւնը կատարուէր գրաւուած հողին վրայ, ապա այդ պիտի ըլլար բնիկ տեղացի ժողովուրդէն աւելի իրենց գինուորներուն վճարելու եւ անոնց անմիջական կարիքներուն համար: Թերեւս այս նպատակով ալ մամլուքները դրամ հատանեցին Տարսոնի դրամահատարանին մէջ, երբ քաղաքը գրաւեցին Կոստանդին Գ-ի տիրակալութեան շրջանին⁴³:

Բաղդատելով ալ-Նասիր Մուհամմէդի դրամները հայտատու թագուորիններու մակերեսին հետ, դիւրահասկնալի է, թէ ինչու լրիւ խորագրութիւնը չի կրնար դրոշմուել հայկական դրամներուն վրայ: Նախ՝ թագուորինները ունին աւելի փոքր տրամագիծ քան՝ մամլուքներու դիւրանները, որոնց կաղապարները գործածուեցան կրկնադրոշմելու համար թագուորինները: Եթէ նոյնիսկ փորձէին ամէնէն խնամեալ կերպով դրոշմել մետաղը, միշտ կաղապարին որոշ մէկ մասը դրամի մետաղէն դուրս պիտի մնար: ալ ընտրանք չկար: Երկրորդ, սկիզբները մամլուքները ժամանակ չունէին մետաղը հալեցնելու, ձուլելու, բարակ թերթերու վերածելու ու կլորակ արծաթ մետաղներ կտրելու դիրճէմներու թերչափի սահմանումին մէջ: Շուտով դրամ պատրաստելու համար կրկնադրոշմելը ամէնէն դիւրին ու արագ միջոցն էր⁴⁴: Կրկնադրոշմուած դրամները արտադրուած են բացարձակ անփութութեամբ: Այս պատճառով բազմաթիւ օրինակներ իրարու քով դրուելով պէտք էր ուսումնասիրուէին վերակազմելու համար կրկնադրոշմի լրիւ խորագրութիւնները:

Ինչպէս Ադիւսակ Յի մէջ ցուցակագրուած է, Կիլիկեան Հայաստանի արարներէնով կրկնադրոշմուած դրամներուն մեծամասնութիւնը՝ նուազագոյն ութսուն առ հարիւրը, կը պատկանի Լեւոն Գ-ին: Երկ-



لا اله
محمد ر 5ss الاشراف ملك 4p لا اله الا الله 4ss الله 3

لا اله الا الله
محمد رسول الله 7ss لا اله الا الله
رسول الله 6p وما النصر
السلطان الملك 6ss الدنيا والدين 5p

النصر الا من عند
لا اله الا الله
محمد رسول الله 8p
السلطان الملك الناصر
ناصر الدنيا والدين
محمد بن الملك 8ss
السلطان
ناصر الدنيا
محمد بن الملك 7p

10ss }
15ss } لا اله الا الله
16ss } محمد رسول الله
18ss } ارسله بالهدى
19ss }
وما النصر
السلطان الملك
ناصر 9ss
الله
النصر الا من عند 9p

لا اله الا الله
محمد رسول الله
ارسله 11p
الله
وما النصر الا من
السلطان الملك الناصر
ناصر الدنيا 11ss
الله
وما النصر الا من عند
لا اله الا الله
محمد 10p

12 }
17 }  13ss-1 الملك 13ss-2  رسول 13p-1

السلطان الملك
ناصر الدنيا شعبان
والدين شعبان بن 15p
13p-2  14 

السلطان الملك
الاشرف ناصر الدنيا
والدين شعبان
بن الملك ... ال 19p } 16p }
السلطان الملك
الاشرف ناصر
والدين شعبان
بن حسن
بن الملك 18p

**Աղյուսակ 2. Արաբատառ խորագրով թիւներ կրկնադրոշմուած հայ
դրամներուն վրայ**

որով մեծագոյն խումբը կը պատկանի Օշին թագաւորին: Այս մէկը հասկնալի է, քանի որ Լեւոն Դ- յաջորդեց իր հօրը՝ Օշինին: Լեւոն Դ- իր տարեկան 1.200.000 թագուորին հարկը մամուլքներուն վճարելու համար պէտք ունէր ամէն կտոր արծաթ դրամի, որ կարելի էր գտնել Կիլիկիոյ գանձատան մէջ:

Աղիւսակ 3. Արաբերէնով կրկնադրոշմուած հայ դրամներու հաշուեկշիռ

Թագաւոր	Ժամանակաշրջան	արծաթ/պղինձ	քանակ ⁴⁶	տիպ
Լեւոն Ա.	1198-1219	այո	2	I
Հեթում Բ.	1289-1305	այո	10էն պակաս	4.5
Լեւոն Գ.	1301-1307	այո	10էն պակաս	III
Օշին	1308-1320	այո	100էն պակաս	III
Լեւոն Դ.	1320-1342	այո	400էն պակաս	III
Կի	1342-1344	այո	1	14
Կոստանդին Գ.	1344-1363	այո	10էն պակաս	IV
Լեւոն Բոնակալ	1363-1365	այո	ս6էն պակաս	IV

Երբ Լեւոն Դ- կը վճարէր իր հարկը, շատ հաւանական է, որ հարկի դրամներուն մէջ կային նաեւ Օշինի եւ թերեւս ալ Լեւոն Գ-ի արծաթեայ դրամներ: Լեւոնի Դ-ի յաջորդող միւս բոլոր թագաւորներէն միայն չափազանց հազուադիւտ կամ սակաւաթիւ կրկնադրոշմուած դրամներ հասած են մեզի: Այս կը թելադրէ թէ մամուլքները եկած, բռնագրաւած են ինչ որ կրցած են գտնել ու կրկնադրոշմած գանոնք, կամ ալ եթէ հարկ տրուած է, անոնք մեծամասնութիւնը հալեցուցած են, ձոյլ մետաղի վերածած, ապա հատանած են իրենց արծաթեայ դրամները: Սակայն, վերջին թագաւորներու համար, դրամագիտական տուեալներ կը թելադրեն թէ կրկնադրոշմուելու գործողութիւն տեղի ունեցած է եւ շատ քիչ դրամներ վատ կերպով կրկնադրոշմուած են, որով ներքնադրոշմի հայերէն խորագրութիւնը կ'արտօնէ մեզի գանոնք վերագրել իրենց համապատասխան հայ արքաներուն:

ԿՐԿՆԱԴՐՈՇՄՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

Կրկնադրոշմուած դրամներու ինքնութիւնն ստուգելը ինքնին բաւական խրթին եւ ժամանակ սպառող աշխատանք մըն է: Նման ուսումնասիրութիւն մը կը պահանջէ հմտութիւն արաբատառ դրամներուն հետ, յատկապէս՝ մամուլքներու դրամներու խորագրութեանց հետ (առ հասարակ այս շրջանի իսլամական դրամները պատկերագրութիւն չունին): Հետազօտողը նաեւ ծանօթ ըլլալու է հայատառ դրամներու պատկերագրութեանց եւ խորագրութեանց: Երբեմն կարելի է նշմարել հայ թագաւորին անուան միայն սկզբնատառերը: Կամ

կարելի է ընթերցել բառ մը, որ կրնայ միայն քանդակուած ըլլալ որոշ թագաւորի մը դրամին վրայ: Օրինակի համար, ՇԻՆԱՄ բառը միայն նշմարուած է Օչինի թագուորին դրամին վրայ:

Ընդհանրապէս կրկնադրոշմուած դրամներուն վրայ բոլոր արաբատառ խորագրութիւնները լրիւ չեն: Իւրաքանչիւր դրամի վրայ կը նշմարուի խորագրութեան որոշ մէկ հատուածը՝ հինգ կամ վեց տող խորագրութենէն միայն մէկ կամ երկու տողերու կէսերը: Ոչ միայն իւրաքանչիւր ազգի, այլ նաեւ իւրաքանչիւր տիրակալի դրամը ունի ուրոյն, ինքնայատուկ մանրամասնութիւններ, զորս ճանչնալն ու զանազանելը մեծապէս կը դիւրացնեն կրկնադրոշմուած դրամի մը ինքնութիւնը ստուգելն ու վերագրելը:

Նկատի առնելով կրկնադրոշմուած դրամներուն անսովոր հանգամանքը՝ բանասէրի ու հաւաքորդի համար, կարելիութեան սահմաններուն մէջ, փորձուեցաւ իւրաքանչիւր տեսակ կրկնադրոշմուած դրամէն ցուցակագրել երկուական օրինակ: Բոլորին ալ լուսանկարները ընծայուած են տախտակներուն մէջ: Ներքնադրոշմի տեսակներուն ծառայող դրամները կարգաւորուած են հայերէն գլխագիր տառերով՝ Ա., Բ., Գ., կրկնադրոշմուած դրամները՝ 1, 2, 3..:

Աղիւսակ ՚ին մէջ ընծայուած են վերակազմուած արաբատառ կրկնադրոշմի խորագրութիւնները՝⁴⁶ (եւ իրենց թարգմանութիւնները)⁴⁷, որոնք զարնուած են հայատառ դրամներուն վրայ: Աղիւսակ 2ին մէջ տրուած են ոչ-լրիւ արաբատառ խորագրութիւններ՝ կրկնադրոշմուած, ընծայուած հայ դրամներուն վրայ: Շփոթութիւն չստեղծելու համար, լրիւ եւ վերակազմուածները կոչուած են Տիպ եւ դասաւորուած են հռոմէական թիւերով (օրինակի համար՝ Տիպ III), իսկ ոչ-լրիւ կամ անկատար դրոշմները՝ խորագրութիւն ու դասաւորուած են պարզ թիւերով եւ հայերէն տառերով (օրինակի համար՝ Խոր. 10ա): Խորագրութիւններու դասաւորումը կարգաւորուած է ցուցակագրութեան եւ տախտակներու նկարներուն թիւերուն համաձայն: Օրինակի համար Խոր. 10ա կը պատկանի թիւ 10 դրամի երեսին կամ առաջին կողմին, Խոր. 10բ՝ նոյն դրամի կռնակին կամ երկրորդ կողմին:

Դասաւորութեան ձեւաւորումը միօրինակուած է բոլոր կրկնադրոշմուած դրամներուն համար եւ կը բաղկանայ չորս մասերէ:

1. Առաջին տողը կու տայ թագաւորին անունը, գահակալութեան տարիները, դրամին անունը եւ ներքնադրոշմի Տիպը:
2. Երկրորդ մասը կը յիշատակէ դրամին տրուած թիւը, կրկնադրոշմին որով պատկանիլը, տիրակալին գահակալութեան տարիները, դրոշմին տրուած հռոմէական թիւը եւ վկայակոչուած աղբիւրները:

3. Երրորդ բաժինը կը նկարագրէ Ա. եւ Բ. կողմերը՝ կրկնադրոշմ եւ ներքնադրոշմ, ու կը նշէ դրամներուն վրայ տպուած արաբերէն խորագրութիւնները, զորս կարելի է գտնել աղիւսակ 2ի մէջ:
4. Չորրորդ, վերջին տողը ցոյց կու տայ թէ դրամը արծաթ է (ԱՐ) թէ՞ պղինձ (ՊՂ), տրամագիծը՝ միլիմետրով (մմ.), ծանրութիւնը՝ գրամով (գ.), կրկնադրոշմուած (կ/դ), խորագրութիւնէն դէպի ներքնադրոշմ (ն/դ), խորագրութեան առանցքային ուղղութիւնները՝ նախ երեսը, ապա կռնակը եւ դրամին յիշատակուած ժողովածուն:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ստորեւ տրուած է Կիլիկեան Հայաստանի արաբերէնով կրկնադրոշմուած դրամներուն դասակարգումը-

- 1,2. Լեւոն Ա-ի (1198-1219) կրկնառիւծ արծաթեայ դրամները կրկնադրոշմուած են սելջուկեան սուլթան Քայխոսրով Գ-ի (1265/6) կողմէ, Լուլուա Հանքը, որ մինչեւ 1219 հայերուն կը պատկանէր:
3. Հեթում-Քայխոսրովի (1242) երկլեզուեան արծաթ դրամ մը կրկնանշուած է Այլահ:
4. Հեթում Բ-ի (1289-1305) պղնձեայ քարտէզ մը կրկնադրոշմուած է մամուլք սուլթան Մելիք ալ-Աշրաֆ Սալահ ալ-Դին Պալիլի կողմէ, վերագրուած՝ Սեքուլեանի կողմէ:
5. Հեթում Բ-ի պղնձեայ քարտէզ մը կրկնադրոշմուած է սելջուկեան կառավարիչի մը կողմէ: Սուլթանին անունը դրամին վրայ չէ արձանագրուած: Բաղդատութիւն մը սելջուկեան դրամներու գիրերու հետ փաստեց թէ տառերու գրելաձեւը նման է սելջուկեան սուլթան Մասուդ Բ-ի (1282-1305) դրամներուն: Յաւելեալ կերպով, Հեթում Բ-ի քարտէզին վրայ դրոշմուած արաբերէն տառերը Մասուդի դրամներու խորագրութեան մէկ մասը կը կազմեն:

Վերոյիշեալ դրամները սելջուկներու կողմէ դրոշմուած են, պարզապէս մետաղը կրկին գործածելու համար: Օրինակի համար, Լուլուան մինչեւ 1219 Կիլիկիոյ հայ հողամասին մաս կը կազմէր: Նոյնիսկ դրամները հոն մնացած կրնային ըլլալ: Ապացոյց մը չկայ թէ այս դրամները սելջուկներուն ձեռքը անցած են որպէս հարկ: Մեր եզրակացութիւնն է թէ սելջուկները զանոնք ստացած են վաճառականական ձեռնարկներու պատճառով:

